ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 6
ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գիտական խորհրդի 2025թ. դեկտեմբերի 17-ի նիստի

Խորհրդի 32 անդամներից նիստին ներկա էին 23-ը: Նախագահում էր խորհրդի նախագահ դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը, քարտուղարում՝ խորհրդի քարտուղար տ.գ.թ., դոցենտ Հ.Մարգարյանը:

Քվորումը ստուգելուց առաջ, խորհրդի նախագահի առաջարկով, խորհրդի անդամները շնորհավորեցին Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Գրիգոր Ռաֆայելի Հայրապետյանին ծննդյան տարեդարձի կապակցությամբ: Ֆակուլտետի գիտխորհրդի անունից դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը գնահատանքի խոսքեր հնչեցրեց՝ մաղթելով նորանոր հաջողություններ, ուժ ու եռանդ:

Քվորումը ստուգելուց հետո խորհրդի նախագահը քվեարկության դրեց օրակարգը: Ասիստենտ, տ.գ.թ. Կ.Սահակյանը հանդես եկավ առաջարկով՝ օրակարգի ընթացիկ հարցերում ներառված երկրորդ տարվա հայցորդի նոր գիտական ղեկավարի հաստատման և հեռակա ասպիրանտի թեմայի վերաձևակերպման հարցերը քննարկել՝ որպես օրակարգի 2-րդ և 3-րդ հարցեր: Այլ առաջարկներ չհնչեցին: Խորհրդի նախագահը քվեարկության դրեց տ.գ.թ. Կ.Սահակյանի առաջարկով փոփոխված օրակարգը, որը միաձայն հաստատելուց հետո խորհուրդն անցավ օրակարգային հարցերի քննարկմանը (օրակարգը կցվում է):

ՕՐԱԿԱՐԳ

1. Նոր ընդունված ասպիրանտի թեմայի և ղեկավարի հաստատում
2. Երկրորդ տարվա հայցորդի նոր գիտական ղեկավարի հաստատում
3. Հեռակա ասպիրանտի թեմայի վերաձևակերպում
4. Հայցորդի ատեստավորում
5. Ամբիոնի վարիչների 2024/25 ուստարվա հաշվետվությունների հաստատում
6. Ֆակուլտետի դեկանի 2024/25 ուստարվա հաշվետվություն
7. Ընթացիկ հարցեր
   7.1 Հեռակա ուսուցման մագիստրոսական թեզերի թեմաների վերնագրերի և գիտական ղեկավարների հաստատում

1. ԼՍԵՑԻՆ. Կառավարման և գործարարության ամբիոնի նոր ընդունված առկա ուսուցմամբ օտարերկրյա ասպիրանտի թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին հարցը:

1. ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը ներկայացրեց նոր ընդունված առկա ուսուցմամբ օտարերկրյա ասպիրանտ Մոհամմեդ Աբդուլսալամ Սաիֆ Իբրահիմիին և հարցի քննարկումը սկսելու համար ձայնը փոխանցեց Կառավարման և գործարարության ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա.Հակոբջանյանին:

2. Կառավարման և գործարարության ամբիոնի նոր ընդունված առկա ուսուցմամբ օտարերկրյա ասպիրանտ Մոհամմեդ Աբդուլսալամ Սաիֆ Իբրահիմի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին միջնորդությունը ներկայացրեց ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա.Հակոբջանյանը՝ նշելով, որ ամբիոնի նիստում հաստատվել է օտարերկրյա ասպիրանտի թեման՝ «Քաթարի ազգային բրենդինգի խնդիրները գլոբալ մրցունակության համատեքստում», գիտական ղեկավար է հաստատվել՝ տ.գ.թ., դոցենտ Վարդան Ալեքսանյանը: Հավելեց նաև, որ օտարերկրյա ասպիրանտ Մոհամմեդ Աբդուլսալամ Սաիֆ Իբրահիմը ներկա է գիտխորհրդի նիստին և պատրաստ է պատասխանել հարցերին:

3. Հարց հնչեցրեցին տ.գ.թ., ասիստենտ Գ.Սահակյանը, տ.գ.դ., պրոֆեսոր Թ.Թորոսյանը՝ թեմայի ընտրության նպատակահարմարության առնչությամբ:

4. Օտարերկրյա ասպիրանտ Մոհամմեդ Աբդուլսալամ Սաիֆ Իբրահիմը պատասխանեց հարցադրմանը: Նախ հակիրճ ներկայացրեց թեման, մատնանշեց թեմայի ընտրության մի շարք հիմնավորումներ:

5. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը նշեց, որ թեմայի ընտրության և ձևակերպման կապակցությամբ նախ բովանդակային և ծավալուն քննարկում է կազմակերպվել գիտական ղեկավար, տ.գ.թ., դոցենտ Վ.Ալեքսանյանի հետ, հետո՝ ամբիոնի նիստում: Հավելեց, որ հաշվի են առնվել ատենախոսության թեմայի շրջանակում կատարվելիք գիտական հետազոտության հնարավորությունները: Հարցի քննարկումն ամփոփելով, դեկան, դոցենտ Կ.Խաչատրյանը առաջարկեց՝ Կառավարման և գործարարության ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա.Հակոբջանյանի միջնորդությունը այս հարցի կապակցությամբ դնել քվեարկության:

1. ՈՐՈՇԵՑԻՆ. Հիմք ընդունելով Կառավարման և գործարարության ամբիոնի 16.12.25թ. թիվ 5 նիստի որոշումը և խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ հաստատել ԵՊՀ Կառավարման և գործարարության ամբիոնի նոր ընդունված առկա ուսուցմամբ օտարերկրյա ասպիրանտ Մոհամմեդ Աբդուլսալամ Սաիֆ Իբրահիմի՝ «Քաթարի ազգային բրենդինգի խնդիրները գլոբալ մրցունակության համատեքստում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ: Գիտական ղեկավար հաստատել տ.գ.թ., դոցենտ Վարդան Ալեքսանյանին:

Կառավարման և գործարարության ամբիոնի առկա ուսուցմամբ օտարերկրյա ասպիրանտի թեման և ղեկավարը հաստատվեցին՝ միաձայն քվեարկությամբ (23 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ)։

2. ԼՍԵՑԻՆ. Ֆինանսահաշվային ամբիոնի երկրորդ տարվա հայցորդ Անահիտ Արտաշեսի Կարախանյանի նոր գիտական ղեկավարի հաստատման մասին հարցը։

2. ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Ֆինանսահաշվային ամբիոնի երկրորդ տարվա հայցորդ Անահիտ Արտաշեսի Կարախանյանի նոր գիտական ղեկավարի հաստատման մասին միջնորդությունը ներկայացրեց ամբիոնի վարիչի պաշտոնակատար, տ.գ.թ., ասիստենտ Գ.Սահակյանը՝ նշելով, որ հայցորդի գիտական ղեկավարը երջանկահիշատակ տ.գ.դ, պրոֆեսոր Վ.Բոստանջյանն է եղել։ Հայցորդը ամբիոնին առաջարկել է ՀՊՏՀ գիտության գծով պրոռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր Դավիթ Ներսիկի Հախվերդյանի թեկնածությունը։ Հաշվի առնելով հայցորդի առաջարկը՝ ամբիոնի նիստում կայացվել է որոշում՝ հայցորդ Ա.Կարախանյանի նոր գիտական ղեկավար հաստատել տ.գ.դ., պրոֆեսոր Դ.Հախվերդյանին։

2. Հարցեր հնչեցրեցին տ.գ.դ., պրոֆեսոր Գ.Վարդանյանը, տ.գ.թ., դոցենտ Ն.Միրզոյանը՝ այլ բուհից գիտական ղեկավարի ընտրության և ամբիոնի ներուժը չօգտագործելու առնչությամբ։

3. Հարցադրումներին պատասխանելով, ամբիոնի վարիչի պաշտոնակատար, տ.գ.թ., Գ.Սահակյանը նշեց, որ հարցի լուծումը ձգձգվել է շուրջ 4 ամիս, արվել է առավելագույնը ամբիոնի ներուժի օգտագործման համար, սակայն հայցորդի դիրքորոշումը չի փոխվել։

4. Դեկան, դոցենտ Կ.Խաչատրյանը նշեց, որ, ըստ գործող կարգի, հայցորդը նման ընտրության իրավունք ունի, հայցորդի և գիտական ղեկավարի համագործակցված աշխատանքից է կախված ատենախոսության որակը, ուստի հայցորդի դիրքորոշումն այս հարցում էական է։ Հարցի քննարկումն ամփոփելով, դեկան, դոցենտ Կ.Խաչատրյանը առաջարկեց՝ Ֆինանսահաշվային ամբիոնի վարիչի պաշտոնակատար, տ.գ.թ., ասիստենտ Գ.Սահակյանի միջնորդությունը այս հարցի կապակցությամբ դնել քվեարկության։

2. ՈՐՈՇԵՑԻՆ. Հիմք ընդունելով Ֆինանսահաշվային ամբիոնի 12.12.25թ. թիվ 5 նիստի որոշումը և խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ ԵՊՀ Ֆինանսահաշվային ամբիոնի երկրորդ տարվա հայցորդ Անահիտ Արտաշեսի Կարախանյանի նոր գիտական ղեկավար հաստատել տ.գ.դ., պրոֆեսոր Դավիթ Ներսիկի Հախվերդյանին։

Ֆինանսահաշվային ամբիոնի երկրորդ տարվա հայցորդի նոր գիտական ղեկավարը հաստատվեց՝ միաձայն քվեարկությամբ (23 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ)։

3. ԼՍԵՑԻՆ. Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Տիգրան Արամի Կարապետյանի թեկնածուական ատենախոսության թեմայի վերաձևակերպման մասին հարցը:

3. ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Տիգրան Արամի Կարապետյանի թեկնածուական ատենախոսության թեմայի վերաձևակերպման մասին միջնորդությունը ներկայացրեց ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա.Խառատյանը՝ նշելով, որ ամբիոնի նիստում որոշվել է հեռակա ուսուցմամբ ասպիրանտի ատենախոսության «Ազգային անվտանգության ռազմավարության տնտեսագիտամաթեմատիկական մոդելավորման հիմնահարցերը սահմանադրականության ասպեկտում» թեման վերաձևակերպել հետևյալ կերպ՝ «Ազգային անվտանգության ռազմավարության տնտեսագիտամաթեմատիկական մոդելավորման հիմնահարցերը ՀՀ ջրային ռեսուրսների պահպանման և արդյունավետ օգտագործման ասպեկտում» (ղեկավար տ.գ.դ., պրոֆեսոր Հ.Սարգսյան): Տ.գ.թ., դոցենտ Ա.Խառատյանը հանգամանալից ներկայացրեց հեռակա ուսուցմամբ ասպիրանտի թեմայի վերաձևակերպման անհրաժեշտությունը:

2. Հարց հնչեցրեց տ.գ.դ., պրոֆեսոր Վ.Աբրահամյանը՝ վերաձևակերպումից ուսումնասիրության օբյեկտի հնարավոր փոփոխության առնչությամբ:

3. Առաջարկներ հնչեցրեցին: Տ.գ.դ., պրոֆեսոր Գ.Վարդանյանը առաջարկեց վերաձևակերպման մեջ շեշտադրել էկոլոգիական բաղադրիչը, տ.գ.թ., դոցենտ Գ.Հայրապետյանը՝ տնտեսական անվտանգության բաղադրիչը:

4. Դեկան, դոցենտ Կ.Խաչատրյանը ընդգծեց, որ քննարկվող հարցի կապակցությամբ ամբիոնում ծավալվել է բովանդակային և հանգամանալից քննարկում և առաջարկեց հաստատել ամբիոնի ընդունած որոշումը:

5. Հարցի քննարկումն ամփոփելով, դեկան, դոցենտ Կ.Խաչատրյանը առաջարկեց՝ Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա.Խառատյանի միջնորդությունը այս հարցի կապակցությամբ դնել քվեարկության:

3. ՈՐՈՇԵՑԻՆ. Հիմք ընդունելով Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի 03.11.2025թ. թիվ 4 նիստի որոշումը և խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ ԵՊՀ Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Տիգրան Արամի Կարապետյանի ատենախոսության «Ազգային անվտանգության ռազմավարության տնտեսագիտամաթեմատիկական մոդելավորման հիմնահարցերը սահմանադրականության ասպեկտում» թեման վերաձևակերպել հետևյալ կերպ՝ «Ազգային անվտանգության ռազմավարության տնտեսագիտամաթեմատիկական մոդելավորման հիմնահարցերը ՀՀ ջրային ռեսուրսների պահպանման և արդյունավետ օգտագործման ասպեկտում», Ը.00.08 «Տնտեսության մաթեմատիկական մոդելավորում» մասնագիտությամբ:

Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտի թեկնածուական ատենախոսության թեմայի վերաձևակերպումը հաստատվեց՝ միաձայն քվեարկությամբ (23 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ):

4. ԼՍԵՑԻՆ. Կառավարման և գործարարության ամբիոնի հայցորդ Գայանե Վարուժանի Հայրապետյանի ատեստավորման մասին հարցը:

4. ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Կառավարման և գործարարության ամբիոնի հայցորդի ատեստավորման միջնորդությունը ներկայացրեց ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա.Հակոբջանյանը՝ նշելով, որ Գայանե Վարուժանի Հայրապետյանի «Ներդրումային գրավչության հիմնախնդիրները ՀՀ սարքաշինության ոլորտում» թեմայով (ղեկավար տ.գ.թ., դոցենտ Վ.Հ. Առաքելյան) ատենախոսության շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում կատարված աշխատանքի վերաբերյալ ամբիոնը հաշվետվություն չի ստացել: Հավելեց, որ հայցորդը ամբիոնի նիստին չի ներկայացել և առաջարկեց չատեստավորել:

2. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը ընդգծեց, որ հայցորդ Գ.Հայրապետյանի ատեստավորման վերջին տարին է և առաջարկեց Կառավարման և գործարարության ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա.Հակոբջանյանի միջնորդությունը այս հարցի կապակցությամբ դնել քվեարկության:

4. ՈՐՈՇԵՑԻՆ. Հիմք ընդունելով Կառավարման և գործարարության ամբիոնի 16.12.25թ. թիվ 5 նիստի որոշումը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայցորդ Գայանե Վարուժանի Հայրապետյանը չի ներկայացել նիստին՝ վերջին տարվա հայցորդ Գայանե Վարուժանի Հայրապետյանի մեկ տարվա կատարած աշխատանքը համարել անբավարար և չատեստավորել:

Կառավարման և գործարարության ամբիոնի հայցորդը չատեստավորվեց՝ միաձայն քվեարկությամբ (23 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ):

5. Ամբիոնի վարիչների 2024/25 ուստարվա հաշվետվությունների հաստատում

5.1 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Գ.Հայրապետյանի 2024/25 ուստարվա հաշվետվությունը:

5.1 ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Գ.Հայրապետյանը հանդես եկավ զեկուցմամբ՝ ամփոփ ներկայացնելով ամբիոնի գործունեությունը 2024/25 ուսումնական տարում: Նախ ներկայացրեց հաշվետու տարում ամբիոնի անդամների ակտիվ ներգրավվածությունը

ֆակուլտետի աշխատանքներում՝ դիմորդների մասնագիտական կողմնորոշման համատեքստում, ամբիոնում գործող կրթական ծրագրերը, ամբիոնի դերակատարումը միջազգային և տեղական հաստատությունների կազմակերպած օլիմպիադաներին և մրցույթներին ուսանողների մասնակցությունն ապահովող նախապատրաստական աշխատանքներում՝ ուսանողների հաջողությունների համատեքստում: Հաջորդիվ ներկայացրեց ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմն ըստ պաշտոնի, գիտական աստիճանի, աշխատանքային պայմանագրի տեսակի, ինչպես նաև սեռատարիքային կազմը:

Մատնանշեց, որ ամբիոնը աշխատակիցների թվով ֆակուլտետի ամենափոքր ամբիոնն է և ներկայացրեց հաշվետու ժամանակահատվածում ամբիոնում արձանագրված հաջողությունները. 1) էապես բարելավված «Տնտեսագիտություն» բակալավրիատի և «Միջազգային տնտեսական հարաբերություններ» մագիստրոսական կրթական ծրագրերի արդյունավետ կազմակերպում և իրականացում, 2) «Տնտեսագիտություն» մասնագիտությամբ բակալավրիատի կրթական ծրագրի մշտադիտարկման իրականացում: Հաջորդիվ ներկայացրեց ամբիոնի գծով մագիստրատուրային և ասպիրանտուրային առնչվող հարցերում արձանագրված դրական տեղաշարժերը. 2024/25 ուստարում ամբիոնն ունեցել է մեկ առկա ուսուցմամբ ասպիրանտ:

Հաշվետվության երկրորդ մասում ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Գ.Հայրապետյանը ներկայացրեց 2024/25 ուստարում գիտահետազոտական աշխատանքների մասով գրանցված պատկերը. 1) ամբիոնի աշխատակիցների կողմից հրատարակվել է 15 գիտական հոդված (ազդեցության գործակցով պարբերականներում՝ 0), 1 ուսումնամեթոդական ձեռնարկ, 2) դրամաշնորհներին մասնակցության մասով՝ նշեց, որ ինքն ընդգրկված է ՀՀ ԿԳՄՍՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից ֆինանսավորվող «ՀՀ տնտեսական ռիսկերի կառավարման կառուցակարգերի կատարելագործումը» գիտական թեմայով իրականացվող դրամաշնորհային ծրագրում (թեմայի ղեկավար՝ տ.գ.թ., դոցենտ Նոննա Խաչատրյան): Հաջորդիվ ներկայացրեց ամբիոնի աշխատակիցների միջազգային գիտաժողովներին մասնակցությունը, նաև ԵՊՀ շարունակական կրթության կենտրոնի վերապատրաստման դասընթացներին մասնակցության արդյունքները և ամբիոնի ձեռքբերումները՝ գործընկերների հետ համագործակցության համատեքստում:

2. Հարց հնչեցրեց դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը՝ երիտասարդ կադրերով ամբիոնը համալրելու ուղղությամբ տարվող աշխատանքների առնչությամբ:

3. Ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Գ.Հայրապետյանը, հարցադրմանը պատասխանելով, նշեց, որ համակարծիք է և բարձրացված հարցը համարում է խիստ մտահոգիչ: Հավելեց, որ այդ ուղղությամբ ակտիվ աշխատանք է տարվում ամբիոնում՝ մատնանշելով, որ հաշվետու տարում ամբիոնից գիտաժողովներին մասնակցության աճ է գրանցվել:

Ելույթ ունեցողներ չեղան:

4. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը նշեց՝ հաշվետու տարում ամբիոնի ձեռքբերումները վկայում են, որ զգալի աշխատանք է կատարվել: Ընդգծեց գիտական

հարցերով ամբիոնի ակտիվության բարձրացման կարևորությունը՝ շեշտադրելով ամբիոնը երիտասարդ կադրերով համալրելու գործընթացը: Ամփոփելով առաջարկեց քննարկվող հարցը՝ Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի 2024/25 ուստարվա գործունեությունը, քվեարկությամբ գնահատել դրական:

5.1 ՈՐՈՇԵՑԻՆ.

Հիմք ընդունելով Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Գ.Հայրապետյանի 2024/25 ուստարվա հաշվետվությունը և խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի 2024/25 ուստարվա գործունեությունը գնահատել դրական:

Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի 2024/25 ուստարվա գործունեությունը գնահատվեց դրական՝ միաձայն քվեարկությամբ (23 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ):

5.2 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Կառավարման և գործարարության ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա.Հակոբջանյանի 2024/25 ուստարվա հաշվետվությունը:

5.2 ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Կառավարման և գործարարության ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա.Հակոբջանյանը հանդես եկավ զեկուցմամբ՝ ամփոփ ներկայացնելով ամբիոնի գործունեությունը 2024/25 ուսումնական տարում: Նախ ներկայացրեց ամբիոնի ակտիվ գործունեությունը դիմորդների մասնագիտական կողմնորոշման համատեքստում՝ ըստ հետևյալ ուղղությունների. 1) դիմորդների այցելություններ ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետ, 2) պրոֆեսորադասախոսական անձնակազմի այցելություններ դպրոցներ, 3) ԵՊՀ «Տնտեսագիտական դպրոց» ծրագրի իրականացում: Ներկայացրեց ամբիոնում գործող բակալավրիատի («Կառավարում») և մագիստրատուրայի («Գործարար վարչարարություն (կառավարում)», «Շուկայագիտություն (մարքեթինգ)») կրթական ծրագրերը՝ մատնանշելով, որ «Կանաչ տնտեսություն և կառավարում» մագիստրոսական կրթական նոր ծրագիրն արդեն լիցենզավորված է, իսկ «Ստարտափների կառավարում» մագիստրոսական կրթական նոր ծրագիրը՝ լիցենզավորման փուլում է: Հաջորդիվ ներկայացրեց ամբիոնի դերակատարումը ուսանողների հաջողությունների համատեքստում՝ ըստ հետևյալ ուղղությունների. 1) միջազգային օլիմպիադաներ, 2) CaseKey Academy բիզնես խնդիրների լուծման մրցույթներ, 3) գիտական հոդվածների հրատարակում, 4) միջազգային գիտաժողովների մասնակցություն, 5) սերտիֆիկացված դասընթացների մասնակցություն, 6) կրթության երրորդ աստիճան:

Մատնանշեց, որ ամբիոնը աշխատակիցների թվով ֆակուլտետի ամենամեծ ամբիոնն է և ներկայացրեց ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմն ըստ պաշտոնի, գիտական աստիճանի, աշխատանքային պայմանագրի տեսակի, ինչպես նաև

սեռատարիքային կազմը և կարողությունների զարգացումը: Ընդգծեց, որ պրոֆեսորադասախոսական կազմի գիտական ակտիվությունը նախորդ ուստարվա համեմատ աճել է: Ամբիոնի դասախոսների կողմից հրատարակված հոդվածների ընդհանուր թիվը կազմում է 30, որից 4-ը՝ ազդեցության գործակցով ամսագրերում: Հրատարակվել է 1 դասագիրք, ներկայացվել են 6 դրամաշնորհային հայտեր, որոնցից ֆինանսավորում են ստացել 5-ը: Ամբիոնը ակտիվորեն մասնակցել է միջազգային գիտաժողովներին, պրոֆեսորադասախոսական կազմի փորձի փոխանակմանը և վերապատրաստումներին:

Հաշվետվության երկրորդ մասում ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա.Հակոբջանյանը ներկայացրեց ամբիոնի գրանցած արդյունքերը գործընկերների հետ համագործակցության համատեքստում՝ ըստ հետևյալ ուղղությունների. 1) վարպետության դասերի կազմակերպում, 2) արտալսարանային դասերի կազմակերպում, 3) առցանց դասախոսությունների կազմակերպում, 4) «Kotler Impact»-ի ներկայացուցիչ AWE Consulting ընկերության հետ համագործակցություն:

Ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա.Հակոբջանյանը հաշվետվությունն ավարտեց ամբիոնի հետագա անելիքների ներկայացմամբ: 2025/26 ուսումնական տարվա ընթացքում ամբիոնը նախատեսել է. 1) «Կառավարում» բակալավրիատի կրթական ծրագրի, «Գործարար վարչարարություն (կառավարում)» և «Շուկայագիտություն (մարքեթինգ)» մագիստրոսական կրթական ծրագրերի միջազգային հավատարմագրման աշխատանքների պատշաճ կազմակերպում, 2) 2025/26 ուսումնական տարում «Կանաչ տնտեսություն և կառավարում» նոր մագիստրոսական կրթական ծրագրի ընդունելության կազմակերպում, 3) «Մենեջմենթի հիմունքներ», «Մենեջմենթ», «Մարքեթինգ» դասընթացների ուսումնական ձեռնարկների պատրաստում և տպագրություն, 4) Միջազգային ինդեքսավորում ունեցող գիտատեղեկատվական շտեմարաններում գիտական հոդվածների տպագրության խրախուսում:

2. Հարց հնչեցրեց տ.գ.դ., պրոֆեսոր Թ.Թորոսյանը՝ «Մենեջմենթի հիմունքներ» և «Մենեջմենթ» ուսումնական ձեռնարկների բովանդակային տարբերության պարզաբանման առնչությամբ:

3. Ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա.Հակոբջանյանը հարցադրմանը պատասխանելով, նշեց, որ «Մենեջմենթի հիմունքներ» և «Մենեջմենթ» ուսումնական ձեռնարկների բովանդակությունները համապատասխանում են «Կառավարում» բակալավրիատի կրթական ծրագրի 1-ին և 3-րդ կուրսերում դասավանդվող համանուն դասընթացներին: Հավելեց, որ մագիստրատուրայում նմանատիպ դասընթացը դասավանդվում է 3-րդ մակարդակով:

Ելույթ ունեցողներ չեղան:

4. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը նշեց, որ ամբիոնը մեծաթիվ է և ակտիվորեն մեծ ծավալի ծրագրեր է իրականացնում՝ մասնավորապես, ֆակուլտետի դրամաշնորհային ծրագրերի զգալի մասը բաժին է ընկնում այս ամբիոնին: Ամփոփելով առաջարկեց քննարկվող հարցը՝ Կառավարման և գործարարության ամբիոնի 2024/25 ուստարվա գործունեությունը, քվեարկությամբ գնահատել դրական:

5.2 ՈՐՈՇԵՑԻՆ.

Հիմք ընդունելով Կառավարման և գործարարության ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա.Հակոբջանյանի 2024/25 ուստարվա հաշվետվությունը և խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ Կառավարման և գործարարության ամբիոնի 2024/25 ուստարվա գործունեությունը գնահատել դրական:

Կառավարման և գործարարության ամբիոնի 2024/25 ուստարվա գործունեությունը գնահատվեց դրական՝ միաձայն քվեարկությամբ (23 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ):

5.3 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Ֆինանսահաշվային ամբիոնի վարիչի պաշտոնակատար, տ.գ.թ., ասիստենտ Գ.Սահակյանի 2024/25 ուստարվա հաշվետվությունը:

5.3 ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Ֆինանսահաշվային ամբիոնի վարիչի պաշտոնակատար, տ.գ.թ., ասիստենտ Գ.Սահակյանը հանդես եկավ զեկուցմամբ՝ ամփոփ ներկայացնելով ամբիոնի գործունեությունը 2024/25 ուսումնական տարում: Նախ, հաշվետվության առաջին մասում, ներկայացրեց ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմն ըստ պաշտոնի, գիտական աստիճանի, աշխատանքային պայմանագրի տեսակի, ինչպես նաև սեռատարիքային կազմը և կարողությունների զարգացումը: Հաջորդիվ ներկայացրեց հաշվետու ժամանակահատվածում ամբիոնի աշխատակիցների կողմից հրատարակված հոդվածների և մենագրությունների ընդհանուր թիվը՝ 14:

Հաշվետվության երկրորդ մասում ամբիոնի վարիչի պաշտոնակատար, տ.գ.թ., ասիստենտ Գ.Սահակյանը ներկայացրեց ամբիոնի ձեռքբերումները Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գործունեության գնահատման կարգով հաշվարկվող KPI ցուցանիշով՝ ընդգծելով, որ ամբիոնի 7 անդամների գրանցած լավագույն արդյունքները փոխհատուցվել են դրամական պարգևատրմամբ, ներկայացրեց ամբիոնի դերակատարումը ուսանողների հաջողությունների համատեքստում՝ ըստ հետևյալ ուղղությունների. 1) Տնտեսագիտական դպրոց, 2) CaseKey 2025, 3) Օլիմպիադա: Հաջորդիվ անդրադարձավ կրթական ծրագրերի մասով գրանցված պատկերին: Հաշվետու տարում ամբիոնում գործել են բակալավրիատի «Ֆինանսներ» և մագիստրատուրայի «Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ» կրթական ծրագրերը, սկսած 2025/26 ուսումնական տարուց գործում է մագիստրատուրայի «Ֆինանսներ» կրթական ծրագիրը, իսկ մագիստրատուրայի «Հաշվապահական հաշվառում և աուդիտ» կրթական ծրագիրը՝ չի գործել (ծրագիրը 2023 թ.-ից չի հայտագրվել): Ամփոփելով հավելեց, որ հաշվետու ժամանակահատվածում ամբիոնի ասպիրանտների թիվը եղել է 3 (որից մեկը պաշտպանել է), հայցողների թիվը՝ 1:

2. Հարցեր հնչեցրեցին տ.գ.դ., պրոֆեսոր Գ.Վարդանյանը և դեկան դոցենտ Կ.Խաչատրյանը՝ նշելով, որ մտահոգիչ են ամբիոնի աշխատակազմի տվյալների խիստ անհամաչափ համամասնությունը և գործունեության մեջ գիտական բաղադրիչը՝

տպագրված գիտական հոդվածները և դրամաշնորհները քիչ են: Ի՞նչ քայլեր են պատրաստվում ձեռնարկել նշված ուղղություններով:

3. Հարցադրումներին պատասխանելով, ամբիոնի վարիչի պաշտոնակատար, տ.գ.թ., ասիստենտ Գ.Սահակյանը ընդգծեց, որ բարձրաձայնված խնդիրներն ունեն օբյեկտիվ հիմք՝ ամբիոնի հիմնական կազմի փոքր տեսակարար կշիռը պայմանավորված է դասընթացների գերակշիռ մասի նեղ մասնագիտական ուղղվածությամբ: Հավելեց, որ հիմնական կազմի մեծացման ուղղությամբ տարվող աշխատանքի արդյունքում ամբիոնի ասիստենտ, տ.գ.թ. Հ.Դովլաթյանը դարձել է հիմնական աշխատակից, իսկ ամբիոնի գիտական գործունեության ակտիվացման ուղղությամբ քննարկումներն արդեն սկսվել են:

4. Ելույթ ունեցավ տ.գ.թ., ասիստենտ Կ.Սահակյանը՝ նշելով, որ ամբիոնի դասընթացների՝ մասնավորապես, «Հաշվապահական հաշվառում», «Վիճակագրություն» և «Բանկային գործ», արդյունավետ կազմակերպման համար տեսական հենքից բացի շատ կարևոր է աշխատանքային փորձի առկայությունը: Այդ նպատակով պետք է ակտիվացնել ԿԲ-ի, ՊԵԿ-ի (և այլ համապատասխան կառույցների) հետ համագործակցությունը:

5. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը նշեց, որ բարձրաձայնված հարցերը հրատապ լուծում են պահանջումը՝ ամբիոնը մագիստրոսական ծրագրերի իրականացման խնդիր ունի: Հավելեց, որ պետք է քայլեր ձեռնարկվեն «Հաշվապահական հաշվառում և աուդիտ» կրթական ծրագրի կայացման համար՝ մասնավորապես, կրթական ծրագրի շրջանավարտները հնարավորություն ունենան փորձագետ հաշվապահի մասով որակավորման քննություն հանձնել առավել հեշտացված ընթացակարգով: Ամփոփելով առաջարկեց քննարկվող հարցը՝ Ֆինանսահաշվային ամբիոնի 2024/25 ուստարվա գործունեությունը, քվեարկությամբ գնահատել դրական:

5.3 ՈՐՈՇԵՑԻՆ.

Հիմք ընդունելով Ֆինանսահաշվային ամբիոնի վարիչի պաշտոնակատար, տ.գ.թ., ասիստենտ Գ.Սահակյանի 2024/25 ուստարվա հաշվետվությունը և խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ Ֆինանսահաշվային ամբիոնի 2024/25 ուստարվա գործունեությունը գնահատել դրական:

Ֆինանսահաշվային ամբիոնի 2024/25 ուստարվա գործունեությունը գնահատվեց դրական՝ միաձայն քվեարկությամբ (23 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ):

5.4 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա.Խառատյանի 2024/25 ուստարվա հաշվետվությունը:

5.4 ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա.Խառատյանը հանդես եկավ զեկուցմամբ՝ ամփոփ ներկայացնելով ամբիոնի գործունեությունը 2024/25 ուսումնական տարում: Նախ ընդգծեց, որ ամբիոնը աշխատակիցների թվով ֆակուլտետի 2-րդ մեծ ամբիոնն է և ներկայացրեց ամբիոնի

պրոֆեսորադասախոսական կազմն ըստ պաշտոնի, գիտական աստիճանի, աշխատանքային պայմանագրի տեսակի, ինչպես նաև սեռատարիքային կազմը և կարողությունների զարգացումը: Հաջորդիվ ներկայացրեց ամբիոնի դասախոսների կողմից հրատարակված հոդվածների ընդհանուր թիվը 31, որից 5-ը՝ ազդեցության գործակցով ամսագրերում: Հաշվետու տարում ամբիոնի անդամները ակտիվ մասնակցություն են ունեցել գիտաժողովներին՝ 7 գիտական զեկուցում արտերկրում, 8 գիտական զեկուցում ԵՊՀ-ում: Ամբիոնի 10 դասախոսներ մասնակցել են թվով 18 վերապատրաստման դասընթացների ինչպես Հայաստանում (ԵՊՀ ԾԿԿ կազմակերպած), այնպես էլ՝ արտերկրում: Ամբիոնը ակտիվ կերպով ներգրավված է եղել 5 դրամաշնորհային ծրագրերում:

Հաշվետվության երկրորդ մասում ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա.Խառատյանը ներկայացրեց ֆակուլտետում կրթական ծրագրերի բարեփոխման և իրականացման գործընթացում ամբիոնի կատարած աշխատանքները: Ընդգծեց դիմորդների մասնագիտական կողմնորոշման և ընդունելության համատեքստում ամբիոնի գործուն ջանքերը և՛ ֆակուլտետում գործող բակալավրի կրթական ծրագրերի, և՛ հատկապես ամբիոնում գործող «Տվյալների գիտությունը բիզնեսում» մագիստրոսական կրթական ծրագրի կայացման գործում: Մատնանշեց ամբիոնի կատարած հսկայածավալ աշխատանքը ուսանողների հաջողությունների համատեքստում՝ ըստ հետևյալ ուղղությունների. 1) մասնակցություն գիտական դրամաշնորհներին, 2) մասնակցություն գիտաժողովներին, 3) համատեղ գիտական հոդվածների հրատարակում, 4) մասնագիտական խաղ-մրցույթի կազմակերպում: Հավելեց, որ հաշվետու ժամանակահատվածում ամբիոնի ասպիրանտների և հայցորդների թիվը եղել է 12, որից 3-ը պաշտպանել են:

Ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա.Խառատյանը հաշվետվությունն ավարտեց ամբիոնի հետագա անելիքների ներկայացմամբ: 2025/26 ուսումնական տարվա ընթացքում ամբիոնը նախատեսել է. 1) հրատարակել «Էկոնոմետրիկա» և «Python ծրագրավորման հիմունքներ, մաս 1» ուսումնական ձեռնարկները, 2) աշխատանքներ ձեռնարկել «Միկրոտնտեսագիտություն (2-րդ մակարդակ)», «Գործույթների հետազոտման մաթեմատիկական մեթոդներ» դասընթացների ուսումնական ձեռնարկների հրատարակման ուղղությամբ, 3) ամբիոնում անցկացնել գիտական սեմինարներ, 4) շարունակել աշխատանքներ տանել ուսանողներին գիտահետազոտական աշխատանքներում ներգրավելու ուղղությամբ:

2. Հարց հնչեցրեց տ.գ.թ., ասիստենտ Կ.Սահակյանը՝ երիտասարդ կադրերով ամբիոնը համալրելու ուղղությամբ հաջողված աշխատանքի առնչությամբ:

3. Ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա.Խառատյանը, հարցադրմանը պատասխանելով, նշեց, որ ամբիոնի երիտասարդացմանը մեծապես նպաստել է «Տվյալների գիտությունը բիզնեսում» մագիստրոսական կրթական ծրագիրը:

Ելույթ ունեցողներ չեղան:

4. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը նշեց, որ ամբիոնի գիտական գործունեությունը շատ ակտիվ է, հատկապես շեշտադրեց ուսանողների հետ գիտահետազոտական համատեղ աշխատանքների իրականացումը՝ ընդգծելով, որ այս

հարցում ամբիոնը ֆակուլտետում առաջատար է: Ամփոփելով առաջարկեց քննարկվող հարցը՝ Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի 2024/25 ուստարվա գործունեությունը, քվեարկությամբ գնահատել դրական:

5.4 ՈՐՈՇԵՑԻՆ.

Հիմք ընդունելով Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա.Խառատյանի 2024/25 ուստարվա հաշվետվությունը և խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի 2024/25 ուստարվա գործունեությունը գնահատել դրական:

Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի 2024/25 ուստարվա գործունեությունը գնահատվեց դրական՝ միաձայն քվեարկությամբ (23 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ):

6. ԼՍԵՑԻՆ. Ֆակուլտետի դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանի 2024/25 ուստարվա հաշվետվությունը:

6. ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Ֆակուլտետի դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը հանդես եկավ զեկուցմամբ՝ ամփոփ ներկայացնելով ֆակուլտետի գործունեությունը 2024/25 ուսումնական տարում: Նախ՝ հաշվետվության առաջին մասում, ներկայացրեց արձանագրված ձեռքբերումներն ու հաջողությունները հետևյալ ուղղություններով. 1) դիմորդների հետ տարվող աշխատանքներ, 2) կրթական ծրագրեր, 3) միջազգային հավատարմագրում, 4) ուսանողների հաջողություններ, 5) ֆինանսական աջակցություն ուսանողներին, 6) ակադեմիական համակազմի նկարագիրը և կարողությունների զարգացումը, 7) գիտահետազոտական գործունեություն և մասնակցություն ֆինանսավորվող գիտական նախագծերին, 8) Միջազգային եռօրյա գիտաժողով - 2024, 9) գործընկերների հետ համագործակցություն, 10) Ֆակուլտետի 90-ամյակի միջոցառումներ: Հաշվետվության երկրորդ մասում ներկայացրեց հետագա անելիքները՝ շեշտադրելով 11) մարտահրավերները և 12) ֆակուլտետի ռազմավարական առաջնահերթություններն ու հիմնական ծրագրավորված գործողությունները:

1) Հաշվետու ուստարում ֆակուլտետը մի շարք ավագ դպրոցների աշակերտների համար կազմակերպել է շուրջ 15 տեղեկատվական հանդիպումներ, որոնց մասնակցել են շուրջ 450 աշակերտներ: Դիմորդների հետ տարվող աշխատանքների շրջանակներում ֆակուլտետը կազմակերպել է «ԵՊՀ Տնտեսագիտական դպրոց» երկօրյա ծրագիրը երկու շրջափուլով՝ աշնանային (30 դպրոց, 300 աշակերտ) և գարնանային (78 դպրոց, 350 աշակերտ), որին մասնակցել են Երևան քաղաքի և մարզերի տարբեր ավագ դպրոցների շուրջ 650 աշակերտներ:

2) 2024/25 ուստարում ֆակուլտետի կրթական ծրագրերում տեղի են ունեցել հիմնարար բարեփոխումներ. «Տվյալների գիտությունը բիզնեսում» մագիստրոսական ծրագիրը սինխրոնիզացվել է ԱՄՆ Սան Խոսեի պետական համալսարանի «Տվյալների

անալիտիկա» ծրագրի հետ, Տվյալագիտության և ԱԲ ոլորտում 4 նոր դասընթացներ են ներդրվել, իսկ ուսման տևողությունը կրճատվել է 2 տարուց մինչև 1,5 տարի (90 ETSC), կայացել է 1 տարի ուսման տևողությամբ «Ֆինանսներ» մագիստրոսական նոր կրթական ծրագիրը, լիցենզավորվել է «Կանաչ տնտեսություն և կառավարում» (Էրազմուս+ T-Green) մագիստրոսական կրթական ծրագիրը՝ ընդունելության կազմակերպումը նախատեսվում է 2026/27 ուստարում, լիցենզավորման փուլում է «Ստարտափների կառավարում» («Ստարտափ Արմենիա») մագիստրոսական ծրագիրը, մշակվում է «Բիզնես և գլոբալ հարաբերություններ» մագիստրոսական կրթական ծրագիրը:

3) Հաշվետու ուստարում ֆակուլտետում զգալի աշխատանքներ են կատարվել բակալավրի 3 կրթական ծրագրերի՝ «Տնտեսագիտություն», «Ֆինանսներ», «Կառավարում», և մագիստրատուրայի 3 կրթական ծրագրերի՝ «Տվյալների գիտությունը բիզնեսում», «Գործարար վարչարարություն (կառավարում)», «Ծուկայագիտություն (մարքեթինգ)», միջազգային հավատարմագրման աշխատանքների պատշաճ կազմակերպման համար:

4) 2024/25 ուստարում ուսանողները ակտիվ մասնակցություն են ունեցել միջազգային ծրագրերին և հետազոտություններին. ֆակուլտետի 3 ուսանողներ գիտական զեկուցումներով հանդես են եկել գիտաժողովներում, 5 ուսանողներ մասնակցել են միջազգային «Աշնանային դպրոցին», 8 ուսանողներ՝ միջազգային օլիմպիադաների, 5 ուսանողներ մեկ կիսամյակ ուսանել են արտերկրում՝ Էրազմուս+ ծրագրի շրջանակներում, 11 ուսանողներ համատեղ գիտական հոդվածներ են հրատարակել դասախոսների հետ:

5) Հաշվետու ուստարում «Բիբլոս Բանկ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից ֆակուլտետի բարձր առաջադիմություն ցուցաբերած բակալավրի 5 ուսանողի տրամադրվել է միանվագ կրթաթոշակ՝ 1 մլն դրամի չափով, Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ & PMI Science կողմից «Տվյալների գիտությունը բիզնեսում» մագիստրոսական ծրագրի 1-ին և 2-րդ կուրսի 11 ուսանողների տրամադրվել է ֆինանսական աջակցություն՝ ուսման վարձի շուրջ 70%-ի չափով:

6) Հաշվետու ուստարում ֆակուլտետում պրոֆեսորադասախոսական կազմն ըստ տարիքային խմբի հետևյալն է. աշխատակիցների 21.3%-ը «մինչև 35 տարեկան» խմբում է, 59.1%-ը՝ «36-63 տարեկան» խմբում, իսկ 19.6%-ը՝ «64 և ավելի տարեկան» խմբում: 2024/25 ուստարում հրապարակվել է 73 գիտական հոդված (9 ազդեցության գործակցով), դասագիրք՝ 1, ուսումնամեթոդական ձեռնարկ՝ 1: Ֆակուլտետի 11 դասախոս վերապատրաստվել է ԵՊՀ Շարունակական կրթության բաժնի կողմից կազմակերպված դասընթացներում, 5-ը՝ Մ.Վ. Լոմոնոսովի անվան Մոսկվայի պետական համալսարանում, 4-ը՝ ՀՀ տարբեր բուհերում և կազմակերպություններում:

7) 2024/25 ուստարում ֆակուլտետից ընդհանուր առմամբ ներկայացված դրամաշնորհային հայտերի քանակը կազմել է 11, որից հաղթող է ճանաչվել 7 դրամաշնորհային հայտ, իսկ ներկայացված հայտերից 1-ը գտնվում է փորձաքննության փուլում: Ֆակուլտետի դասախոսները մասնակցել են 15 միջազգային գիտաժողովների և Էրազմուս+ ծրագրի շրջանակներում փորձի փոխանակմանը և վերապատրաստումներին:

8) 2024 թ. հոկտեմբերի 8-10-ը ֆակուլտետում տեղի ունեցավ «Փոխակերպվող տնտեսություն. թվային տեխնոլոգիա, տարածական անհամամասնություններ և կյանքի որակ» խորագրով միջազգային գիտաժողովը՝ նվիրված ֆակուլտետի հիմնադրման 90-ամյակին, որին մասնակցել են 22 երկրներից ժամանած շուրջ 40 անվանի ու աշխարհահռչակ գիտնականներ, զեկուցումների ընդհանուր քանակը կազմել է շուրջ 80:

9) Գործընկերների հետ համագործակցության արդյունքում հաշվետու տարում օտարերկրյա 8 արտասահմանյան պրոֆեսորներ դասախոսություններով հանդես են եկել ֆակուլտետում, ֆակուլտետը կնքել է 9 նոր համագործակցության պայմանագրեր տեղական գործընկերների հետ, ֆակուլտետը կազմակերպել է ուսանողների թվով 13 այցելություններ տարբեր կազմակերպություններ, ֆակուլտետում կազմակերպվել են նաև թվով 21 վարպետության դասեր:

10) Ֆակուլտետի 90-ամյակի միջոցառումները՝ 2024 թ. հոկտեմբերի 8-10-ը կազմակերպված միջազգային գիտաժողովը, Ֆակուլտետի գիրք-ալբոմի հրատարակումը, Ֆակուլտետի մասին ֆիլմի պատրաստումը, Արամ Խաչատրյան համերգասրահում Հանդիսավոր նիստի կազմակերպումը, հաշվետու տարվա առանցքային ձեռքբերումներն են եղել և էապես հարստացրել են ֆակուլտետի պատմությունը:

11) Հաշվետու ուստարվա ձեռքբերումների ամրապնդման և բազմապատկման համար անհրաժեշտ է դիմակայել հետևյալ մարտահրավերներին՝ կրթական մի մակարդակից մյուսին անցում, մագիստրոսական ծրագրերի ուռճացված ՄՈԳ, ասպիրանտների/հայցորդների քանակի նվազում, դասախոսական աշխատանքի ցածր գրավչություն երիտասարդների համար, անհամաչափ գիտական ակտիվություն ամբիոնների միջև, գիտության բազային ֆինանսավորման բացակայություն:

12) Ֆակուլտետի հետագա անելիքները՝ ըստ ռազմավարական առաջնահերթությունների. ա) դիմորդների ներգրավում, բ) մագիստրատուրայի գրավչության բարձրացում, գ) գիտահետազոտական ակտիվության խթանում, դ) միջազգային կապերի ընդլայնում, ե) գործատուների հետ կապերի ամրապնդում, և ըստ հիմնական ծրագրավորված գործողությունների. ա) 6 կրթական ծրագրերի միջազգային հավատարմագրման ավարտ, բ) «Փոխակերպվող տնտեսություն» խորագրով միջազգային գիտաժողովի կազմակերպում, գ) գիտական սեմինարների կանոնավոր անցկացում, դ) դասագրքերի և ձեռնարկների հրատարակում:

Հարցեր չհնչեցին: Ելույթ ունեցողներ չեղան:

6. ՈՐՈՇԵՑԻՆ. Ֆակուլտետի դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանի 2024/25 ուստարվա հաշվետվությունն ընդունել ի գիտություն:

7. Ընթացիկ հարցեր

7.1 ԼՍԵՑԻՆ. Ֆակուլտետում գործող հեռակա ուսուցման 3 մագիստրոսական կրթական ծրագրերի մագիստրոսական թեզերի թեմաների վերնագրերի և ղեկավարների հաստատման մասին հարցը:

7.1 ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը նշեց, որ ֆակուլտետի մեթոդխորհուրդը զգալի աշխատանք է կատարել հեռակա ուսուցման մագիստրոսական թեզերի վերնագրերի ձևակերպումները վերանայելու ուղղությամբ և հարցի քննարկումը սկսելու համար ձայնը փոխանցեց ֆակուլտետի մեթոդխորհրդի նախագահ, Կառավարման և գործարարության ամբիոնի պրոֆեսոր, տ.գ.դ. Գ.Վարդանյանին:

2. Մագիստրոսական թեզերի թեմաների վերնագրերի և ղեկավարների հաստատման մասին միջնորդությունը ներկայացրեց մեթոդխորհրդի նախագահ, տ.գ.դ., պրոֆեսոր Գ.Վարդանյանը՝ նշելով, որ 2025/26 ուստարում ֆակուլտետի ամբիոններն իրականացնում են հեռակա ուսուցման 3 մագիստրոսական կրթական ծրագրեր: Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնում գործում է հեռակա ուսուցման «Միջազգային տնտեսական հարաբերություններ» (6 ուսանող) մագիստրոսական կրթական ծրագիրը, Կառավարման և գործարարության ամբիոնում՝ հեռակա ուսուցման «Գործարար վարչարարություն (կառավարում)» (21 ուսանող) և «Շուկայագիտություն (մարքեթինգ)» (19 ուսանող) մագիստրոսական կրթական ծրագրերը: Հավելեց, որ աշխատանքի կազմակերպման սկզբունքը չի փոխվել՝ էլ.փոստերի միջոցով թեմաների ձևակերպումները ամբիոնների վարիչներն ուղարկել են ֆակուլտետի փոխդեկան, դոցենտ Վ.Ալեքսանյանին, փոխդեկանը՝ մեթոդխորհրդին: Մեթոդխորհրդի դիտողությունները փոխդեկանը փոխանցել է ամբիոնների վարիչներին: Կատարված աշխատանքի շնորհիվ հստակեցվել են մագիստրոսական թեզերի վերնագրերի ձևակերպումները:

Հարցեր չհնչեցին: Ելույթներ չեղան:

3. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը շնորհակալություն հայտնեց մեթոդխորհրդի անդամներին կատարված աշխատանքի համար և առաջարկեց մեթոդխորհրդի նախագահ, տ.գ.դ., պրոֆեսոր Գ.Վարդանյանի միջնորդությունը այս հարցի կապակցությամբ դնել քվեարկության:

7.1 ՈՐՈՇԵՑԻՆ.

1) Հիմք ընդունելով ԵՊՀ Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի և ֆակուլտետի մեթոդական խորհրդի որոշումները և հաշվի առնելով խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ հաստատել ամբիոնի հեռակա ուսուցման «Միջազգային տնտեսական հարաբերություններ» կրթական ծրագրի մագիստրոսական թեզերի (թվով 6) թեմաները՝ առաջարկվող ձևակերպումներով և համապատասխան ղեկավարներով:

2) Հիմք ընդունելով ԵՊՀ Կառավարման և գործարարության ամբիոնի և ֆակուլտետի մեթոդական խորհրդի որոշումները և հաշվի առնելով խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ հաստատել ամբիոնի հեռակա ուսուցման «Գործարար վարչարարություն (կառավարում)» կրթական ծրագրի մագիստրոսական թեզերի (թվով 21) թեմաները՝ առաջարկվող ձևակերպումներով և համապատասխան ղեկավարներով:

3) Հիմք ընդունելով ԵՊՀ Կառավարման և գործարարության ամբիոնի և ֆակուլտետի մեթոդական խորհրդի որոշումները և հաշվի առնելով խորհրդի նիստում

արտահայտված կարծիքները՝ հաստատել ամբիոնի հեռակա ուսուցման «Շուկայագիտություն (մարքեթինգ)» կրթական ծրագրի մագիստրոսական թեզերի (թվով 19) թեմաները՝ առաջարկվող ձևակերպումներով և համապատասխան ղեկավարներով:

Ֆակուլտետում գործող հեռակա ուսուցման 3 մագիստրոսական կրթական ծրագրերի մագիստրոսական թեզերի թեմաների վերնագրերը և ղեկավարները հաստատվեցին՝ միաձայն քվեարկությամբ (23 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ):

ԵՊՀ ՏԿՖ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Կ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԵՊՀ ՏԿՖ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ